ԵԿԴ/0266/02/12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8 փետրվարի 2023 թվական ք. Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի՝ Հայկ Սահակյանի ընդդեմ «Գապբնակշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ հիմնական պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջի մասին, թիվ ԵԿԴ/0266/02/12 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ ՀՀ սնանկության դատարանի՝ 2023 թվականի հունվարի 19-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. Հայկ Սահակյանը 2012 թվականի փետրվարի 1-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ «Գապբնակշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ հիմնական պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

2. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2012 թվականի փետրվարի 3-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2022 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմամբ գործը հանձնվել է Սնանկության դատարանի քննությանը:

4. Սնանկության դատարանի՝ 2023 թվականի հունվարի 19-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

5. Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի փետրվարի 1-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. 2012 թվականի փետրվարի 1-ին դիմելով դատարան՝ Հայկ Սահակյանը պահանջել է «Գապբնակշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պարտավորեցնել իր կողմից Երևան քաղաքի Արամի փողոցի 72-ից 80-րդ հասցեներում կառուցվող շենքի շինարարության օրենքով սահմանված կարգով ավարտի պահին Հայկ Սահակյանի հետ կնքել անշարժ գույքի՝ Երևան քաղաքի Արամի փողոցի 72-ից 80-րդ հասցեներում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքի դեպի Եկմալյան փողոցին նայող աջակողմյան հատվածից՝ 8-րդ հարկից 225քմ մակերեսով բնակարանի հիմնական առուվաճառքի պայմանագիր՝ համաձայն կողմերի միջև 2010 թվականի ապրիլի 14-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի նախնական պայմանագրի[1]:

7. «Գապբնակշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ որպես վաճառողի և Հայկ Սահակյանի՝ որպես գնորդի միջև 2010 թվականի ապրիլի 14-ին կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի նախնական պայմանագիր, որի համաձայն՝ վաճառողը պարտավորվել է վաճառել, իսկ գնորդը՝ որպես սեփականություն ձեռք բերել Երևան քաղաքի Արամի փողոցի 72-ից 80-րդ հասցեներում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքի դեպի Եկմալյան փողոցին նայող աջակողմյան հատվածից՝ 8-րդ հարկից 225քմ մակերեսով բնակարան[2]:

8. Թիվ ԵԿԴ/0130/04/14 սնանկության գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2014 թվականի

---

[1] Տե՛ս քաղաքացիական գործը, հատոր 1-ին, թերթեր 5-8:
[2] Տե՛ս քաղաքացիական գործը, հատոր 1-ին, թերթ 13:

նոյեմբերի 6-ին կայացրած և օրինական ուժի մեջ մտած վճռով «Գապբնակշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը սնանկ է ճանաչվել, իսկ սնանկության գործի վարույթը դեռևս ավարտված չէ[3]:

9. Հղում կատարելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասին, ««Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 10-րդ մասին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմամբ գործն ըստ ենթակայության ուղարկել է Սնանկության դատարան՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) «Գապբնակշին» ՍՊԸ-ն դատարանի վճռով ճանաչված է սնանկ, որի վարույթը դեռևս շարունակվում է և սույն քաղաքացիական գործով ներկայացված պահանջները սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճ է, հետևաբար սույն քաղաքացիական գործը պետք է հանձնել ՀՀ սնանկության դատարանի քննությանը և այն քննել «Գապբնակշին» ՍՊԸ-ի վերաբերյալ սնանկության վարույթի շրջանակներում»*[4]:

10. Հղում կատարելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասին, 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետին՝ Սնանկության դատարանը 2023 թվականի հունվարի 19-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Սնանկության դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով հետևյալը. *«(…) Սույն գործով ներկայացված պահանջով հայցվորի ներկայացուցիչը խնդրել է «Գապբնակշին» ՍՊ ընկերությանը պարտավորեցնել իր կողմից Երևան քաղաքի Արամի փողոցի 72-ից 80-րդ հասցեներում կառուցվող շենքի շինարարության օրենքով սահմանված կարգով ավարտի պահին Հայկ Սահակյանի հետ կնքել անշարժ գույքի՝ Երևան քաղաքի Արամի փողոցի 72-ից 80-րդ հասցեներում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքից դեպի Եկմալյան փողոցին նայող աջակողմյան հատվածից՝ 8-րդ հարկից 225քմ մակերեսով բնակարանի հիմնական առուվաճառքի պայմանագիր, որպիսի հայցապահանջի ենթադրյալ բավարարման դեպքում, ենթադրվելու է պատասխանող*

[3] Տե՛ս datalex.am տեղեկատվական համակարգ, գործ թիվ ԵԿԴ/0130/04/14:
[4] Տե՛ս քաղաքացիական գործը, հատոր 2, թերթեր 92-94:

«Գապբնակշին» ՍՊ ընկերությունից գույքի հանձնում: (…) [Դ]ատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործով առաջին ատյանի դատարանը թիվ ԵԿԴ/0266/02/12 քաղաքացիական գործն ըստ ենթակայության ուղարկելով սնանկության դատարան նախ որևէ կերպ չի հիմնավորել գույք հանձնելու պահանջի մասով գործի վարույթը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հիմքով կարճելու իրավական հնարավորության բացակայությունը, իսկ քանի դեռ բացառված է գործի վարույթը կարճելու իրավական հնարավորության բացակայությունը, գործն ըստ ենթակայության չէր կարող հանձնվել սնանկության դատարանին: Եվ երկրորդ, գործի քննությամբ որևէ ձևով անդրադարձ չի կատարվել վիճարկվող պայմանագրով նշված՝ վիճելի գույքերն ընդհանրապես պատասխանող «Գապբնակշին» ՍՊ ընկերության գույքային զանգվածի մեջ ներառված լինելու, ըստ այդ նաև սույն քաղաքացիական գործով ծագած վեճը սնանկության դատարանում հարուցված և վարվող սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդեցություն ունենալու հանգամանքներին, այսինքն՝ չի հիմնավորվել 2020 թվականի ապրիլի 15-ի խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորմամբ թիվ ԵԿԴ/0266/02/12 քաղաքացիական գործը սնանկության դատարանում քննության ենթակա լինելու համար անհրաժեշտ պայմանների միաժամանակյա առկայությունը»[5]*:*

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *արդո՞ք առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով ամրագրված նախապայմանները՝ թիվ ԵԿԴ/0266/02/12 քաղաքացիական գործը Սնանկության դատարանի կողմից քննության առնելու համար*:

12. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

[5] Տե՛ս գործը, հատոր 2, թերթեր 112-119:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում»:*

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (...): Սնանկության գործը վարվում է դատավորի կողմից միանձնյա»:*

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր: Սույն մասով սահմանված՝ պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած վեճը ենթակա է քննության սնանկության դատարանում որպես առանձին քաղաքացիական գործ՝ անկախ պարտապանի սնանկ ճանաչված լինելու հանգամանքից»:*

13. Սույն որոշման նախորդ կետում վկայակոչված իրավադրույթներից հետևում է, որ քաղաքացիական գործերը, որպես կանոն, ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում: Այս ընդհանուր կանոնից բացառություն նախատեսված է «Սնանկության մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքի՝ վերը վկայակոչված իրավակարգավորումներից հետևում է, որ սնանկության գործերի վարումն իրականացնում է Սնանկության դատարանը՝ միաժամանակ իրականացնելով նաև սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդեցություն ունեցող այն քաղաքացիաիրավական վեճերի քննությունը, որոնք համապատասխանում են

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված նախապայմաններին:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ քաղաքացիական գործը ենթակա է քննության սնանկության դատարանում սնանկության գործը վարող դատավորի կողմից նույն սնանկության գործի շրջանակում որպես առանձին քաղաքացիական գործ՝ հետևյալ նախապայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

ա) *քաղաքացիաիրավական վեճը պետք է ծագած լինի «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված օբյեկտների, մասնավորապես՝ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված պայմանագրերի առնչությամբ,*

բ) *վեճի լուծումը պետք է ազդի պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա,*

գ) *սնանկության գործը պետք է գտնվի քննության փուլում, այսինքն՝ սնանկության գործի վարույթը պետք է ավարտված չլինի:*

14. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ *«Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանը (…) պարտապանին սնանկ ճանաչելու, դիմումը մերժելու կամ դիմումն առանց քննության թողնելու, ինչպես նաև գործի վարույթը կարճելու մասին անհապաղ տեղեկացնում է՝ (…), Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանին՝ Հայաստանի Հանրապետության բոլոր դատարաններին ծանուցելու համար, (…)»:*

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ *«Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից՝ կարճվում կամ ավարտվում են պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում գտնվող գործերը, և պարտապանի դեմ պարտատերերի պահանջները կարող են ներկայացվել սնանկության վարույթի շրջանակներում՝ սույն օրենքով սահմանված ժամկետներում և կարգով»:*

15. Սույն որոշման նախորդ կետում վկայակոչված իրավակարգավորումների վերլուծությունից հետևում է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններն իրենց վարույթում քննվող քաղաքացիական գործերով պատասխանողների՝ սնանկ ճանաչված լինելու վերաբերյալ տեղեկատվություն ստանալու դեպքում, առաջին հերթին պետք է քննարկման առարկա դարձնեն այդ գործերի նկատմամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի կիրառման հնարավորության հարցը:

Ընդ որում, պարտապանին սնանկ ճանաչելու վերաբերյալ վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը կիրառելի է այնպիսի գործերի նկատմամբ, որոնցով հայցվորի կողմից պատասխանողին ուղղված է գումարի բռնագանձման պահանջ կամ գույք հանձնելու պահանջ*:*

Նշվածից հետևում է, որ վկայակոչված իրավադրույթը կիրառելի է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում՝

ա) քաղաքացիական գործով պատասխանողը դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով սնանկ է ճանաչվել,

բ) քաղաքացիական գործով սնանկ ճանաչված պատասխանողի դեմ ներկայացված է գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջ:

Բացի այդ, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի վերլուծությունից հետևում է, որ պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով գործերի վարույթը կարճելուց հետո օրենսդիրը հնարավորություն է տալիս պարտապանի դեմ պարտատերերի պահանջները ներկայացնել սնանկության վարույթի շրջանակներում՝ նույն օրենքով սահմանված ժամկետներում և կարգով: Նշվածից հետևում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը կիրառելի է այնպիսի պահանջների նկատմամբ, որոնք իրենց բնույթով համապատասխանում են սնանկության վարույթի շրջանակներում պարտատերերի կողմից պարտապանի դեմ ներկայացվող պահանջներին:

16. Սույն քաղաքացիական գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- 2012 թվականի փետրվարի 1-ին դիմելով դատարան՝ Հայկ Սահակյանը պահանջել է «Գապբնակշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը

պարտավորեցնել իր կողմից Երևան քաղաքի Արամի փողոցի 72-ից 80-րդ հասցեներում կառուցվող շենքի շինարարության օրենքով սահմանված կարգով ավարտի պահին Հայկ Սահակյանի հետ կնքել անշարժ գույքի՝ Երևան քաղաքի Արամի փողոցի 72-ից 80-րդ հասցեներում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքի դեպի Եկմալյան փողոցին նայող աջակողմյան հատվածից՝ 8-րդ հարկից 225քմ մակերեսով բնակարանի հիմնական առուվաճառքի պայմանագիր՝ համաձայն կողմերի միջև 2010 թվականի ապրիլի 14-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի նախնական պայմանագրի[6], որը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2012 թվականի փետրվարի 3-ի որոշմամբ ընդունվել է վարույթ[7],

- «Գապբնակշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ որպես վաճառողի և Հայկ Սահակյանի՝ որպես գնորդի միջև, 2010 թվականի ապրիլի 14-ին կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի նախնական պայմանագիր, որի համաձայն՝ վաճառողը պարտավորվել է վաճառել, իսկ գնորդը՝ որպես սեփականություն ձեռք բերել Երևան քաղաքի Արամի փողոցի 72-ից 80-րդ հասցեներում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքի դեպի Եկմալյան փողոցին նայող աջակողմյան հատվածից՝ 8-րդ հարկից 225քմ մակերեսով բնակարան[8]:

- թիվ ԵԿԴ/0130/04/14 սնանկության գործով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 6-ին կայացրած և օրինական ուժի մեջ մտած վճռով «Գապբնակշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը սնանկ է ճանաչվել, ընդ որում՝ սնանկության գործի վարույթը դեռևս ավարտված չէ[9],

- հղում կատարելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասին, ««Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-294-Ն ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 10-րդ մասին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմամբ գործն ըստ ենթակայության ուղարկել է Սնանկության դատարան՝ այն պատճառաբանությամբ, որ «Գապբնակշին» ՍՊԸ-ն դատարանի վճռով

---

[6] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 2-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

ճանաչված է սնանկ, որի վարույթը դեռևս շարունակվում է և սույն քաղաքացիական գործով ներկայացված պահանջը՝ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճ է, հետևաբար սույն քաղաքացիական գործը պետք է հանձնել ՀՀ սնանկության դատարանի քննությանը և այն քննել «Գապբնակշին» ՍՊԸ-ի վերաբերյալ սնանկության վարույթի շրջանակներում[10],

- հղում կատարելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասին, 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետին՝ Սնանկության դատարանը 2023 թվականի հունվարի 19-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով, որ սույն գործով ներկայացված պահանջով հայցվորի ներկայացուցիչը խնդրել է «Գապբնակշին» ՍՊ ընկերությանը պարտավորեցնել իր կողմից Երևան քաղաքի Արամի փողոցի 72-ից 80-րդ հասցեներում կառուցվող շենքի շինարարության օրենքով սահմանված կարգով ավարտի պահին Հայկ Սահակյանի հետ կնքել անշարժ գույքի՝ Երևան քաղաքի Արամի փողոցի 72-ից 80-րդ հասցեներում կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքից դեպի Եկմալյան փողոցին նայող աջակողմյան հատվածից՝ 8-րդ հարկից 225քմ մակերեսով բնակարանի հիմնական առուվաճառքի պայմանագիր, որպիսի հայցապահանջի ենթադրյալ բավարարման դեպքում, ենթադրվելու է պատասխանող «Գապբնակշին» ՍՊ ընկերությունից գույքի հանձնում: Միաժամանակ Սնանկության դատարանն արձանագրել է, որ սույն քաղաքացիական գործով առաջին ատյանի դատարանը թիվ ԵԿԴ/0266/02/12 քաղաքացիական գործն ըստ ենթակայության ուղարկելով սնանկության դատարան նախ որևէ կերպ չի հիմնավորել գույք հանձնելու պահանջի մասով գործի վարույթը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հիմքով կարճելու իրավական հնարավորության բացակայությունը, իսկ քանի դեռ բացառված է գործի վարույթը կարճելու իրավական հնարավորության բացակայությունը, գործն ըստ ենթակայության չէր կարող հանձնվել սնանկության դատարանին: Եվ երկրորդ, գործի

[10] Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

քննությամբ որևէ ձևով անդրադարձ չի կատարվել վիճարկվող պայմանագրով նշված՝ վիճելի գույքերն ընդհանրապես պատասխանող «Գապբնակշին» ՍՊ ընկերության գույքային զանգվածի մեջ ներառված լինելու, ըստ այդմ նաև սույն քաղաքացիական գործով ծագած վեճը սնանկության դատարանում հարուցված և վարվող սնանկության գործով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդեցություն ունենալու հանգամանքներին, այսինքն՝ չի հիմնավորվել 2020 թվականի ապրիլի 15-ի խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորմամբ թիվ ԵԿԴ/0266/02/12 քաղաքացիական գործը սնանկության դատարանում քննության ենթակա լինելու համար անհրաժեշտ պայմանների միաժամանակյա առկայությունը[11]:

17. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 12-15-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո, հարկ է նկատել, որ սույն գործով հայցվոր Հայկ Սահակյանը «Գապբնակշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դեմ ներկայացրել է հիմնական պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջ, որից հետո Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 6-ին կայացրած և օրինական ուժի մեջ մտած վճռով «Գապբնակշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը սնանկ է ճանաչվել:

Նման պայմաններում, անդրադառնալով Սնանկության դատարանի դիրքորոշմանն այն մասին, որ *«(…) առաջին ատյանի դատարանը թիվ ԵԿԴ/0266/02/12 քաղաքացիական գործն ըստ ենթակայության ուղարկելով սնանկության դատարան նախ որևէ կերպ չի հիմնավորել գույք հանձնելու պահանջի մասով գործի վարույթը «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի հիմքով կարճելու իրավական հնարավորության բացակայությունը»,* հարկ է արձանագրել, որ թեև սույն քաղաքացիական գործով ներկայացված հայցապահանջի բավարարման դեպքում ենթադրվելու է պատասխանող «Գապբնակշին» ՍՊ ընկերությունից գույքի հանձնում, այդուհանդերձ, սույն գործի փաստական հանգամանքների համատեքստում՝ պատասխանող «Գապբնակշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության

[11] Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

դեմ ներկայացված հայցապահանջն իր բնույթով չի համապատասխանում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ գույք հանձնելու պահանջին, քանի որ այն նույն կետի իմաստով՝ չի կարող ներկայացվել սնանկության վարույթի շրջանակներում՝ որպես պարտատիրոջ կողմից պարտապանի դեմ ներկայացվող պահանջ:

Վերոգրյալի հետ մեկտեղ, քննարկման առարկա դարձնելով սույն որոշման 13-րդ կետում վերլուծված՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված վավերապայմանների առկայության հարցը, պետք է փաստել, որ՝

ա) սույն քաղաքացիաիրավական վեճը ծագել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված օբյեկտի, այն է՝ պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված պայմանագրի առնչությամբ, մասնավորապես, սույն գործի փաստերի համաձայն՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2014 թվականի նոյեմբերի 6-ին կայացրած և օրինական ուժի մեջ մտած վճռով սնանկ ճանաչված «Գապբնակշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ որպես վաճառողի և Հայկ Սահակյանի՝ որպես գնորդի, միջև դեռևս 2010 թվականի ապրիլի 14-ին կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի նախնական պայմանագիր, որի հիման վրա Հայկ Սահակյանը 2012 թվականի փետրվարի 1-ին դիմել է դատարան՝ պահանջելով պարտավորեցնել «Գապբնակշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը կնքել վերոհիշյալ գույքի առուվաճառքի հիմնական պայմանագիր,

բ) սույն վեճի լուծումը կարող է ազդեցություն ունենալ սնանկության վարույթի շրջանակներում պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա, քանի որ սույն գործով ներկայացված հայցապահանջի բավարարման դեպքում պարտապան «Գապբնակշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ենթադրյալ պատկանող գույքի վերաբերյալ պետք է կնքվի առուվաճառքի հիմնական պայմանագիր, որի արդյունքում նշված գույքը կարող է դուրս գալ սնանկության զանգվածից,

գ) թիվ ԵԿԴ/0130/04/14 սնանկության գործը գտնվում է քննության փուլում, այսինքն՝ սնանկության գործի վարույթը դեռևս ավարտված չէ:

18. Այսպիսով, վերոգրյալի հիման վրա, գտնում եմ, որ առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված նախապայմանները՝ թիվ ԵԿԴ/0266/02/12 քաղաքացիական գործը Սնանկության դատարանի կողմից քննության առնելու համար:

Վերոգրյալի հաշվառմամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ԵԿԴ/0266/02/12 քաղաքացիական գործն ըստ հայցի՝ Հայկ Սահակյանի ընդդեմ «Գապբնակշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ հիմնական պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ սնանկության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ